քարը (ԺԹ.-Ի. դդ.) (2004), *Պատմական հողերու վրայ* (2004), *Խոհեր կեանքի մասին* (2004), *Հայկական ցոլքեր* (Թիւ 1-11 գիրքերը՝ 2004-11), *Հայաստանեան պատկերներ. Եւսեբիոս Քրոնիկագիր* (2003), *Հայաստանեան պատկերներ. հայ ժողովուրդի պատմութիւն* (2004), *Հայաստանեան պատկերներ. հայ գրականութիւն* (2007):

Յարութիւն վրդ. Պզտիկեան մահացաւ 11 Ապրիլ 2021 Փարիզի արուարձան Սեւր քաղաքին մէջ գտնուող Սամուէլ Մուրատեան վարժարանին մէջ:

ՀՀՀ



ԱՐԱՄ ՍԻՄՈՆԵԱՆ
(1955-2022)

Յայտնի պատմաբան Արամ Հրաչիկի Սիմոնեանը ծնուել է 1955ին Գորիս քաղաքում: 1972-77՝ ուսանել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտում, 1977-81՝ ԽՍՀՄ ԳԱ ԽՍՀՄ պատմութեան ինստիտուտի թեկնածուականում, ուր մասնագիտացել է Անդրկովկասի նոր դարի պատմութեան ասպարէզում: 1981-85՝ աշխատել է Հայաստանի ԽՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտում որպէս կրտսեր գիտաշխատող, այնուհետեւ՝ գիտաշխատող, 1983ին պաշտպանել թեկնածուական: 1986-2000՝ եղել է ԵՊՀ ԽՍՀՄ պատմութեան ամբիոնի օգնական, ապա՝ հայոց պատմութեան ամբիոնի դոցենտ, 2000ին պաշտպանել դոկտորական, իսկ 2005ին ստացել է պրոֆեսորի կոչում:

Սիմոնեանը 1993-95՝ ստանձնել է ԵՊՀ գիտական քարտուղարի, իսկ 1995-2000՝ ԵՊՀ ուսումնական վարչութեան պետի պաշտօնները, 2000ին նշանակուել է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, Մայիս 2006ին ընտրուել ռեկտոր եւ այդ պաշտօնն զբաղեցրել է մինչեւ 2019ի Մայիսի 23ը: 2006ին ընտրուել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, 2008ին նշանակուել ԵՊՀ ՀՀԻ տնօրէն:

Գիտական գործունէութեան ընթացքում Սիմոնեանը հեղինակել է 100ից աւելի պատմագիտական աշխատանքներ, որոնց թում՝ չորս մենագրութիւն.- *Рабочие Закавказья в общероссийском рынке наемного труда в конце XIX-начале XX вв. (Историко-статистический анализ) (Անդրկովկասի բանուորները համառուսաստանեան վարձու աշխատաշուկայում ԺԹ. դարավերջ-Ի. դարասկզբին. պատմա-վիճակագրական վերլուծութիւն)* (1995), *Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 ԹԹ.* (2000), *Զանգեզուրի գոյապայքարը 1917-1920 ԹԹ.* (2017):

Հայ ժողովրդի Ի. դարասկզբի պատմութեան հիմնահարցերին նուիրուած Սիմոնեանի գիտական մենագրութիւններն առնչւում են գլխաւորապէս պատմական վիճակագրութեանը, արդիւնաբերական դրամագլխին,

ինչպէս նաեւ Արցախի ու Զանգեզուրի 1917-21ի պատմութեան հիմնախնդիրներին: Նա երախտաշատ հետք թողեց մասնաւորապէս իր հայրենի երկրամասի՝ Սիւնեաց աշխարհի ազգային-ազատագրական պայքարի ուսումնասիրութեան ասպարէզում: Նրա գիտական հետաքրքրութիւնների առանցքում էին նաեւ Հայկական Հարցի, Հայոց Ցեղասպանութեան եւ հայոց պետականութեան խնդիրներին առնչուող հիմնահարցերը: Սիմոնեանի ուշադրութեան կենտրոնում էին նաեւ ժամանակակից արցախեան հիմնահարցը եւ արցախահայութիւնը: Այդ մասին են վկայում նրա բազմաթիւ այցելութիւններն Արցախ, տեղի համալսարանի հետ սերտ գործակցութիւնը: 2006 Յունիսին նա նախաձեռնեց *Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն. անցեալը, ներկան եւ ապագան* միջազգային գիտաժողովի կազմակերպումն ու անցկացումը Ստեփանակերտում: Նա նաեւ իր գործընկերներ Ալիկ Ղարիբեանի եւ հանգուցեալ Էմմա Բաբայեանի հետ հրատարակութեան պատրաստեց *Арцах. Карабах: библиография на русском языке: 1988-2012 гг.* (*Արցախ. Ղարաբաղ, մատենագիտութիւն ռուսերէն լեզուով. 1988-2012*) (2011) փաստաթղթերի ժողովածուն:

Սիմոնեանի նախաձեռնութեամբ ԵՊՀ հրատարակչութիւնը ծաւալել է բեղուն տպագրական գործունէութիւն: 2014ին նա հիմնադրել է *Հայագիտութեան հարցեր* հանդէսը, որի գլխաւոր խմբագիրն էր: Նրա ղեկավարութեամբ պաշտպանուել են 12 թեկնածուականներ:

Սիմոնեանի շնորհիւ ԵՊՀն աշխուժօրէն գործակցել է արտերկրի կրթական, գիտական տարբեր հաստատութիւնների հետ: Նա մասնակցել է բազմաթիւ միջազգային եւ հանրապետական գիտաժողովների: Մեծ էին ԵՊՀն ժամանակակից հետազօտական համալսարան դարձնելու ուղղութեամբ նրա կատարած աշխատանքները: Նրա ղեկավարման տարիներին ԵՊՀում գիտակրթական զարգացմանը զուգահեռ բացուեցին մի շարք նոր ստորաբաժանումներ՝ Չինագիտութեան կենտրոնը, Հայ-հնդկական կենտրոն ամբիոնը, ԵՊՀ Ռուսական կենտրոնը:

Մեծ Եղեռնի հարիւրամեայ տարելիցին ընդառաջ ԵՊՀ գրադարանի մուտքի մօտ Սիմոնեանի ջանքերով հիմնուեց երախտիքի ծառուղին, որտեղ տեղադրուեցին Անատոլ Ֆրանսի, Պիէր Քիյարի, Եոհաննէս Լեփսիուսի, Արմին Վեգնէրի, Հենրի Մորգընթաուի, Ջէյմս Բրայսի, Ֆրանց Վերֆէլի, Եակոբ Քիւնցլէրի, Կարէն Եպպէի, Ֆրիտիոֆ Նանսէնի, Ալմա Եոհանսոնի, Ռաֆայէլ Լեմկինի կիսանդրիները:

Սիմոնեանը նաեւ պատուարժան քաղաքացի էր: Ունենալով հայ մարդուն բնորոշ առաքինութիւնները՝ նա իր ամբողջ կեանքի ընթացքում շրջապատի նկատմամբ դրսեւորել է նրբանկատ ու հոգատար վերաբերմունք: Նրա բնաւորութեանն առանցքային էին հասարակութեանը պիտանի լինելու, կենսագործունէութեան ներդաշնակութիւն ձեւաւորելու իւրայատկութիւնները: Միաժամանակ առանձնանում էր նաեւ իւրաքանչիւր անհատի նկատմամբ նրա ներողամիտ ու սրտցաւ վերաբերմունքը:

Սիմոնեանն արժանացել է Հայաստանի Հանրապետութեան գիտութեան վաստակաւոր գործչի տիտղոսի (2014), Սանկտ-Պետերբուրգի Պետական համալսարանի պատուաւոր դոկտորի (2012), Ղազախստանի *Ղազախստանի անկախութեան 20ամեակ* (2011) եւ Թուրքմենստանի *Մահթումկուլի Ֆրագի* (2014) պետական պարգեւների, *Մովսէս Խորենացի* (2009) ու *Վաչագան Բարեպաշտ* (2016) մեդալների:

Արամ Սիմոնեանը կեանքին վաղաժամ հրաժեշտ տուեց 8 Յունիս 2022ին, Երեւանում:

ԱԼԻԿ ՂԱՐԻԲԵԱՆ (algharibyan@yahoo.com)
ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ (varuzhan.poghosyan@bk.ru)

ԳԷՈՐԳ ՏԷՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ
(1951--2023)

Կեանքի 72րդ տարում իր մահկանացուն կնքեց հայ ձեռագրագիտութեան երախտաւոր, պատմագիտութեան դոկտոր Գէորգ Տէր Վարդանեանը: Միջնադարեան Հայաստանի գրաւոր-մշակութային ժառանգութեան անխոնջ ուսումնասիրողը Մաշտոցեան Մատենադարանում իր նախորդներ Լեւոն Խաչիկեանի, Ասատուր Մնացականեանի, Օննիկ Եգանեանի, Արտաշէս Մաթեւոսեանի եւ միւս արժանաւոր մատենադարանցիների գործի լիիրաւ շարունակողն էր:

Գէորգ Տէր Վարդանեանը ծնուել է 1951 Յունուարի 9ին ՀՀ Տաւուշի մարզի Բերդ համայնքի Ներքին Կարմիրաղբիւր գիւղում: 1973ին աւարտել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտի հնագիտութեան, աղբիւրագիտութեան եւ ազգագրութեան բաժինը:

1974ից մինչեւ կեանքի վերջը նա աշխատել է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերի գիտահետազօտական ինստիտուտ-Մատենադարանում, 1978ից՝ աւագ գիտաշխատող եւ գլխաւոր աւանդապահ (մատենապահ), 1992ից՝ նաեւ ձեռագրագիտութեան խմբի/բաժնի ղեկավար/վարիչ: 1984ին պաշտպանել է «Ներսէս Պալիանենցի պատմագրական ժառանգութիւնը (ԺԴ դ.)» թեկնածուականը: 1995-98՝ զբաղեցրել է Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէնի պաշտօնը: 2016ին պաշտպանել է դոկտորական՝ «Հայոց պատմագրքերի գիտական բնագրերի կազմութեան խնդիրներ եւ ձեռագրական աւանդոյթներ» թեմայով:

Տէր Վարդանեանին էր վիճակուած շարունակելու Մատենադարանի հայերէն ձեռագրերի մայր ցուցակի բազմահատորեակի հրատարակութիւնը, որը, ցաւօք, չհասցրեց ամբողջական տեսնել: Նրա ստեղծած երիտասարդ ձեռագրագէտների խումբը, որը յետագայում դարձաւ Մատենադարանի առանցքային բաժիններից մէկը՝ սկզբում կոչուելով ձեռագրագիտու-